

**ԱՐԾԻՎ ՊԱՌԱՎ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու
քարքառ (խոսվածք)**

Ըլլում է մի մարդ, մի կնիկ ու իրանց իրեք էրեխա՝ էրկու աղջիկ, մի տղա:

Կնիկն ասում է.— Էրեխանց պեթարապ արա:

Հետո մարդն ասում է.— Իրեք հաց թխի աղի:

Կնիկն թխեց իրեք աղի հաց ու տվեց մարդին: Էս մարդը էրեխանց վե կալավ ու գնաց, գնաց մի ծմակի մեջ:

Ասավ էրեխանց.— Էկեք հաց ուտենք:

Էրեխեք էկան ու աղի հացը կերան, ասին.— Ապի, ծըրավել ենք:

Ապին ասում ա.— Ես ջրի տեղը գիտեմ, գնամ ջուր բերեմ:

Խաբեց, գնաց ու էլ չեկավ:

Էրեխեքը մնացին ձեռները ծոցերնուն. ճամբախ չգիտեին, վե կացան, գնացին՝ մի հեղիվոր մարդի ռաստ էկան: Հեղիվորն էլ չոբան էր: Գնացին հիրիկունը հեղիվորի հետ հեղիվորի տունը: Չոբանն էլ քոռ ա, տենում չի, վեր ա կենում իծունուց մի թաս կաթ ա կթում ու բերում բրդում ուտում: Հեղիվորը ուտելիս, էեխեքն էլ մեղրաղից են ուտում:

Հեղիվորն ասում ա.— Էս խի՞ չի կշտացա:

Մեկ էլ գնում կթում, էլի էդ էրեխեքը վրա դառնում են, որ տեսնում է էլի չի կշտանում, հեղիվորը ձեռքերը հրսենց էրկարացնում ու էրեխանց բռնում ա, ու էրեխեք լաց են լինում:

Հեղիվորն ասում ա.— Բալա ջան, լաց մեք լիք, ես էրեխա չունեմ, ձեզ որ գտա, շատ ուրախացա:

Հետո էդ էրեխեքը դառնում են տասնհինգ տարեկան ըլլում:

Հեղիվորը տղին ասում է.— Դու գնա օշխարը: Տանում ես փլան սարի վրա, ամեն տեղի վրա էլ տար, բայց թենց Արծվի սարի վրա տանիլ մի:

Էս տղեն մի քանի վախտ օշխարն է գնում: Հետո ասում է.— Գնամ անգամ մը Արծվի սարը տենամ ի՞նչ կա: Գնում է տենում, որ մի աղբյուր է դուրս գցում: Կանաչ սար մըն է: Մեկ էլ էնդին է մտիկ տալիս, տենում որ պառավ կնիկ մը դուրս էկավ էդ սարից: Էդ թող մնա՝ մենք դառնանք հըղիվորին: Հըղիվոր ուներ մի Ասլան մի Ղափլան՝ կապած զընճիլով:

Պառավն է, որ դուս էկավ, տղեն վախեցավ ու ասաց.— Է՛յ Աստված, դու ինձ քոմակ անես:

Պառավն ասաց.— Այ տղա, օձն իրան պորտով և խուշն իրան թևով էկած չէ էստեղ, դուն քանի՞ գլխանի ես, որ էկիր ես:

Տղեն ասաց.— Դեղի ջան, ես մի հետի ինձ բախշիր:

Պառավն նստեց ծառի տակին: Ասաց տղին.— Ա՛րի իմ կուշտըս:

Դինջացավ, ասաց.— Գըլուխս քըթվի:

Տղեն հեղավ գնաց պառավի կուշտը ու սկսավ նրա գլուխը քթել: Գլուխը քթվում է, տենում է, որ պառվու մազերը էրկեն են, տանում ա ծառից էրկու իրեք տեղով կապում է: Պառավ հիմանում չէ:

Տղեն թողաց պառավին ու դրաղ քաշվեց: Պառավն ուզեց, որ վե կենա, տեսավ, որ դիպ մազերը ծառից կապված են, ծըվաց, իրեք անգամ ծըվաց, տղեն տեսավ, որ արծիվ էր:

Ասավ.— Տղա՛, էկուր իմ աղլուղը կուտամ, իմ մազերը վեր թող:

Տղեն ասաց, որ.— Աղլուղը վրա արա, կգամ վեր կթողում:

Պառավը գցում է աղլուղը, ասում է.— Ա՛յ տղա, դու աղլուղը վերցրու:

Տղան վերցնում ա ու ասում ա.— Պառա՛վ, աղլուղ ի՞նչ հունարի տեր ա:

Պառավն ասում ա.— Թե որ հըղիվորի աչքերին քսես, կսաղանա:

Տղեն էլի պառավը վեր չի թողում:

Ասում է պառավն.— Արի քեզ մի շիու էլ կտամ:

Տղեն ասում ա.— Նանի՛, շրհուն ի՛նչ հունարի տեր ա:

Պառավն ասում ա.— Եթե փչես, քարերն չըմ օշխար կդառնան:

Պառավն շրհուն գցում ա, տղեն վերցնում ա ու փրչում, տենում ա, որ քարերը չըմ օշխար դառնան, ու դըբա իրան են գալիս:

Էս տղեն էլի պառավին վեր չէ թողելիս: Մնում ա կապած:

Պառավն էլ սկսում է ծառից կոծել, որ ծառը պոկի ու տղին պեթարապ անի:

Էն տեղ հըլիվորը տեսնում ա, որ Ասլանն ու Ղափլանն հենց ուզում են զընճիլը կտրել:

Հըլիվորն ասում.— Հե՛յ, վա՛յ, վա՛յ, էրեխիս տեղը նեղ ա:

Գնում ա Ասլանին, Ղափլանին վեր ա թողնում:

Ասլանն ու Ղափլանը ձեռաց հասնում են ու ծառի վրա կապած արծիվ պառավին ուտում են:

Տղեն տենում ա, որ ինքը պառավի ձեռից ազատ ա, ընկնում ա օշխարի առաջ ու գնում ա տուն:

Հըլիվորն ասում ա.— Ա՛յ բալա ջա՛ն, դու օշխարը ինչ անում ես, տեղ գյում չի կա: Թող ու արի տուն:

Էդ տեղ թողում ա օշխարը, գալիս է հըլիվորի կուշտը:

Հըլիվորը ասում ա էդ տղին.— Բալա ջա՛ն, ի՛նչ խապար:

Տղեն ասում ա.— Ապի ջա՛ն, ես տի քու աչքերը սաղացնեմ:

Աղլուղը հանում ա ու տալիս ա հըլիվորին:

Հըլիվորը աչքերին քսում ա թե չէ, սաղանում ա:

Էդ օշխարը մնում ա դրանց, շրհուն ու աղլուղն էլ մնում ա տղի ձեռին:

Հըլիվորը ասում ա.— Ա՛յ տղա, դու լի ընձի որթի, ես լե՛ք քեզ հեր լիմ:

Դրանց է մնում արծվի աղբյուրը, հենց վայելում են ու լավ, լավ հարստանում են, նրանք հասան իրանց մուրազին, մենք էլ՝ մեր մուրազին:

Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ աստղին, մինը լսողին, մինն էլ մտիկ անողին: